«ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնահատող հանձնաժողովի նիստի

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն N 13-2/11.07.23

## Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում 11.07.2023թ. ժամը $11^{00}$ –ին:

Նիստին մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Է.Սանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,
Հանձնաժողովի նախագահի տեղակալ
Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ
Հանձնաժողովի անդամներ՝
Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ
Ե.Բաղդասարյան–ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով
Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ
Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ
Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Հանձնաժողովի քարտուղար՝
Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. 405 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝7, դեմ՝0:

Կայանի արտադրական կարիքների և տրանսպորտի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ձեռք բերել ինդուստրիալ յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2023թ. երրորդ եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով:

405 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀՋ-ՊԸ-ԻՅ-13/11.07.23** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

| Գնման առարկան | Չ/մ | Քանակ | Ապրանքների մատակարարման վայրը | Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները | Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/ |
|---|---|---|---|---|---|
| Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ | լիտր | 405 | ՀրազՋԷԿ ԲԲԸ | 1. Ժակ և Գոռ ՍՊԸ<br>2. Արման-Օիլ ՄԵԿ ՍՊԸ<br>3. ՄոսԷսկո ՍՊԸ | 1. Ժակ և Գոռ ՍՊԸ -1լ 1700դր/ԱԱՀ-ով<br>2. Արման-Օիլ ՄԵԿ ՍՊԸ-1լ 1830 դր/ԱԱՀ-ով<br>3. ՄոսԷսկո ՍՊԸ -1լ 1750 դր-ԱԱՀ-ով |

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխան և լավագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

1. ՀՋ-ՊԸ-ԻՅ-13/11.07.23 ծածկագրով 405 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ին:

2. Կնքել պայնամագիր «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1700 դրամով՝ներառյալ ԱԱՀ-ն, 405 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝7, դեմ՝0:

Է. Սանամյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան